Տուրնըֆոր[1], Ուզըլէյ[2]. Հանվայ[3] եւ այլք, թէեւ այսօր աղքատութեան եւ աւերման մի տխրալի պատկեր է ներկայացնում: Ջուղան մի յարմար վաճառականական եւ փոխադրական կենդրոն էր Հնդկաստանի, Միջին Ասիայի եւ Պարսկաստանի հետ մի կողմից, իսկ միւս կողմից Ռուսաստանի, Եւրոպայի հետ: Ա՛յդ է պատճառն, որ Ջուղայի Հայերն միշնորդ էին Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ, ուստի եւ մեծ հարստութիւններ էին դիզում: Նոցա փարթամութեան եւ ճոխութեան ապացոյց կարող է լինել մասամբ եւ այն հանգամանքը, որ գաղթելով Պարսկաստան եւ հաստատուելով Նոր-Ջուղայում՝ դարձեալ նոյն փարթամութեան եւ շքեղութեան մէջ լող էին տալիս նրանք: Երեւում է, որ արուեստներն եւս բաւական ծաղկած էին Ջուղայում. յայտնի է, որ երբ Շահաբբաս այցելեց Ջուղայ, Հայերը զարմանալի շքեղութեամբ ընդունեցին նրան եւ Ջուղայ մտնելուց՝ աղ ու հացի հետ միասին մի ոսկիէ սկուտեղի մէջ՝ մի ողկոյղ խաղող ներկայացրին: Շահաբբաս կարծելով որ բնական խաղող է, ձեռքը մեկնեց, որ վեր առնի եւ ուտի, բայց զարմանքով տեսաւ, որ ոսկուց շինուած էր արուեստական կերպով, բայց այնքան գեղեցիկ, որ բնականից անկարելի էր զա-

1 Tournefort, Relation d'un voyage du Levant Amsterdame, 1718.

2 W, Ouseley, Travaux, London 1823, 4 vol. III. p. 429—432.

3 S. Hanway, Reisen in Persien, Hambourg 1754, Th. II.